

Nous vous souhaitons une Bonne et Heureuse Année 2003, et prions nos clients de retirer les relevés et les arrêtés de leurs comptes au 31 décembre 2002, ainsi que la correspondance et les avis qui leur sont destinés, à tous nos guichets, à partir du 2 Janvier 2003.

بنك اللبناني الفرنسي
BANQUE LIBANO-FRANÇAISE

ԱԶԳԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 L.Ո. 75ԳԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 244 (21294) ԵՐԵՎԱՆԻ, 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2002 10 ԷՋ

ՄԱՄԼՈՅ
ԱՐՉԱԿՈՒՐԴ

Նոր Տարւուման առիթով, եւ համաձայն լրագրողներու սենտիքայի որոշումին, «Ազգակ» արձակուրդ կ'անուէ այսօր՝ Երեքշաբթի, 31 Դեկտեմբերին եւ վաղը՝ Չորեքշաբթի, 1 Յունւարին:
Մեր լաջորդ թիւը՝ Ուրբաթ, 3 Յունուարին:

2002Ի ՎԵՐՋԻՆ ՀԱՄԱՐԸ

Ժամեր կը բաժնեն մեկի Ամանորէն: Մեր ընթերցողները Ուրբաթ առաւօտ կը ստանան «Ազգակ»ի 2003ի առաջին թիւը: Փաստօրէն «Ազգակ»ի այս թիւով կը փակուի մեր թերթի 2002ի տարին: Սակայն, որեւէ աւարտ ինքնին սկիզբ է նոր հանգրուանի, նոր ժրագրատրուանի, նոր իրազգործումներու:

«Ազգակ»ի ձեռնարկած բաժանորդարշաւի ժամանակը պուզադիպեցաւ ընթացիկ տարւուման աւարտին: Այս նպատակով բազմաժանր ազգայիններու ուղարկուած նամակները հասկի լղուած՝ «Ազգակ»ի վարչական գրասենեակը արդէն սկսաւ ստանալ բազմաթիւ հեռաձայններ, որոնք կը հաստատէին մեր մամուլին բաժանորդագրուելու ընդառաջումները: Եւ փաստը ցոյց տուաւ, որ անոնց պարագային հարկ չկար նոյնիսկ հեռաձայնային հետապնդումին: Կը յուսանք, որ մեր կատարած դիմումներուն ընդառաջելու օրինակելի այս ոճը կը դառնայ վարակիչ եւ 2003ի առաջին օրերուն այս առումով կը շարունակեն անվերջ հնչել «Ազգակ»ի հեռախօսները:

Մենք հաստատ այն համոզումը ունինք, որ ազգային-հասարակական որեւէ նախաձեռնութիւն եւ այդ ծիրին մէջ կատարուող որեւէ դիմում անարձագանգ չի մնար, որքան ալ դժուար ու անհեռանկար ըլլան նիւթական-տնտեսական պայմանները:

«Ազգակ»ին բաժանորդագրուող մէկ մեկ ազգային ներդրում պիտի ունենայ հայ մամուլի անխափան յաղթերը ի պահով ման աշխատանքին: Ծնորհիւ անոնց՝ լիբանանահայ գաղութի մեծագոյն այս օրաթերթը պիտի շարունակէ ձառագայթել ի խնդիր հայապահպանումին, հայ մշակոյթին եւ առհասարակ հայ կեանքի առաւել կայմակերպ ու կառուցողական գործընթացին: Գիտակից այս խափան անսակարկ աջակցութիւնը մեր թերթին՝ կ'ընկալուի իբրեւ հաւաքական մեծ աշխատանքին յաջողութեան մեծապէս նպաստող գործակալ քայլ:

Կը շնորհակալուեմք մեր հին թէ նոր բաժանորդներուն եւ ընդհանրապէս ընթերցողներուն Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը: Բոլորիս ձեռքով «Ազգակ» պիտի թեւակոխէ իր հիմնադրութեան 76րդ տարին: Մեր բոլորին կը սպասեն նոր ժրագիրներ եւ նոր յաջողութիւններ:

«Ա.»

ԲԱԽՈՒՄՆԵՐ ԿԱԶԱՅԻ ԵՒ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՋ



Իսրայէլացի զինուոր մը արգելք կը հանդիսանայ պաղեստինցի ցուցարարներուն Զալքիի մէջ

Իբրեւ իսրայէլացի ծայտուած պաղեստինցի մը սպաննուեցաւ Կազա-Իսրայէլ սահմանին վրայ, ուր բախումներ արձանագրուած են: Երկու այլ պաղեստինցիներ սպաննուեցան Այսրայէլ-ղանանի մէջ:

Կազայի միջադէպը պատահեցաւ, երբ ձեռ-

նառումներով եւ երկու գնդացիներով գինուած պաղեստինցի մը անցնելով փշաթելերը, կրակ բացած է իսրայէլացի զինուորներու վրայ, որոնք հակադարձելով՝ սպաննեցին գայն: Բանակը յայտնեց, որ գինուորներուն մէջ գոհներ ու վիրաւորներ չեն արձանագր-

ւած: Նապոլեոնի մէջ իսրայէլեան ուժեր սպաննեցին պաղեստինցի մը, որ ըստ պաղեստինեան աղբիւրներու՝ քարեր կ'արձակէր գինուորներուն վրայ: Իսրայէլեան բանակին աղբիւրները սա-

Շար.ը՝ էջ 10

ՊԱՂՏԱՏ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ ՉԵՌՆԱԾԱԼ ՉՄՆԱԼ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄՊԱՌՆԱԼԻՔԻՆ ԴԻՄԱՅ

ՄԱԿԻ քննիչները քննութեան ենթարկեցին իրաքեան եօթը կեղծոյններ, ուր ենթադրարար հաւաքական քանդումի գէնքեր կը պատրաստուէին: Մինչ այդ, իրաք արաբական եւ իսլամական պետութիւններէն շօշափելի քայլեր կը պահանջէ՝ օժանդակելու համար ամերիկեան յարձակումի մը դիմադրածելու աշխատանքին:

Քննիչները այցելեցին Ապու Ղարիպի քաղաքի գործարանը, որ Նոյեմբեր 27էն ի վեր արդէն իսկ երկու անգամ քննութեան ենթարկուած է: Ամերիկեան աղբիւրներու համաձայն, իրաքը գործարանին մէջ կը պատրաստուէին հրթիռներու ճարտարարուեստին առնչուող արտադրութիւններ: Կենսաբանական գէնքերու քննիչներ իրենց կարգին այցելեցին առողջապահութեան նախարարութեան գիտաշխատանոցներէն մէկը: Իսկ քննիչներու

երրորդ խմբակ մը երկու թան մը կեղծոյնատեղին ըստ քննարկման արտադրութիւններու պաշտպանութեան կազմակերպու-

թեան մը կեղծոյնատեղին այցելեց, յայտնեցին իրաքը

Շար.ը՝ էջ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՈՒ ԵՒ ԶԱՅՆԱՍՓԻՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Խորագոյն ընդկրուով եւ ցատուով իմացանք Հայաստանի Պատկերասփիւռի եւ Չայնասփիւռի Ընկերութեան Խորհուրդի նախագահ՝ Տիգրան Նաղդալեանի սպանութեան յուրը: Հայկական տեղեկատուական համակարգին ուղղուած այս ոճրագործութիւնը հարուած է նաեւ ընդհանրապէս մեր հայրենիքի վարպետման ու բարգաւաճման գործընթացին:

Կը ցաւակցինք Նաղդալեան ընտանիքին եւ իր գործընկերներուն:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ «ԱԶԳԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ

Պէլյուրթ, 30 Դեկտեմբեր, 2002

Տ. ՆԱԳԻՍԵԱՆԻ ՍՊԱՌՆԹԵԱՆ ՀԱՐՅՈՎ ԵՐԵՔ ԿԱՍԿԱԾԵԼԻՆԵՐ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ

Երէկ կատարուեցան Հայաստանի Հանրային Պատկերասփիւռի եւ Չայնասփիւռի Ընկերութեան Խորհուրդի նախագահ Տիգրան Նաղդալեանի հոգեհանգիստը եւ թաղումը: Նաղդալեան սպաննուած էր Շարթի, 28 Դեկտեմբերին, անձանթի մը կողմէ, մինչ դուրս կու գար իր ծնողքին բնակարանէն: Ան մահացած էր հիւանդանոց փոխադրուելէն ետք:

Նաղդալեանի քաղաքացիական հոգեհանգիստը կատարուեցաւ Երեւանի «Մոսկուա» թատերասրահին մէջ: Թատերասրահի շէնքին մօտ ծաղկեպսակներ գետեղուած էին Հայաստանի նախագահին, կառավարութեան, նախարարութիւններու եւ կազմակերպութիւններու անունով: Մտաւորականներ, լրագրողներ եւ քաղաքացիներ այցելեցին «Մոսկուա» թատերասրահ վերջին հրաժեշտ տալու Նաղդալեանին:

Կէսօրուան ժամը 1:00ին կատարուեցաւ Նաղդալեանի հոգեհանգիստը, զոր մատուցեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոս: Ներկայ էին Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան՝ տիկնոջ հետ, վարչապետ Անդրանիկ Մարգարեան, Սահմանադրական դատարանի նախագահ Գաբրիլ Յարութիւնեան, թաղման կառավարական յանձնաժողովի նախագահ, Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան, Երեւանի քաղաքապետ Ռոպէրթ Նազարեան, նախարարներ, Ազգային ժողովի պատգամաւորներ եւ քաղաքացիներ:

Նաղդալեանի յուղարկուելու ժամանակ կատարուեցաւ Երեւանի Քաղաքային Պանթէոնին մէջ: Խօսք առին Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան, մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնամարզի նախարար Ռուբեն Շառոյեան եւ այլ անձնավորութիւններ: Սերժ Սարգսեան շեշտեց, որ հանրապետութեան իրաւապահ մարմինները ջանք պիտի չիսնային բացայայտելու համար ահաբեկչական այս արարքին ծայրերը:

Միւս կողմէ, «Միւս փրէս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ իրաւապահ մարմիններ Տիգրան Նաղդալեանի սպանութեան առնչութեամբ երէկ ձերբակալած են 3 կասկածելիներ: Զերբակալուածներուն ինքնութիւնը չէ բացայայտուած: Անոնցմէ մէկը առանց արտօնագրի գէնք կը կրէր:

ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ ԱՐԴԻՒՆԱՒԷՏ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ՏՈՒԱՒ ԱԼՃԵՐԻԱ

Սուրբոյ նախագահ Պաղար Ասատ Դամասկոս վերադարձաւ, աւարտելէ ետք Ալճերիա կատարած երկօրեայ պաշտօնական այցելութիւն մը: Երկօրեայ այցելութեան ընթացքին, Ասատ տեսակցութիւն ունեցած էր Ալճերիոյ նախագահ Ապտէլազիզ Պուսթֆիլիքայի հետ: Երկու ղեկավարները քննարկած են շարք մը հարցեր, ինչպէս իրաքը, Միջին Արեւելքի խաղաղութիւնը ու ահաբեկչութեան դէմ պայքարը: Այցելութեան աւարտին, Ասատ ըսաւ, որ այճերիացի նախագահին հետ հանդիպումը շինիչ էր: Ան ըսաւ նաեւ, որ այցելութիւնը կը նպաստէ արաբական աշխարհին միասնականութեան:

(ԱՅՓ)

ՇՆՈՐՀԱՌՈՐ
ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ
Աշխարհի Աճեցի Արարատի նման Ծերակ Գազար 2կգ...
Snack ARARAT, Dora, Tel.: 01/243290

G. AYANIAN & SONS
MERRY CHRISTMAS
We Light up LEBANON Since 1928
Dora: 01/255222 / 3 / 4 / 5
Gemmayze: 01/447000 - 01/447940
Fax: 01/265187 - 01/582357
Cell: 03/627728 / 9
www.ayanian.com

Ուրախ լուր... սակերը նուազեցան
29 INCH TV \$499 +VAT
21 INCH TV \$219 +VAT
15 INCH TV \$139 +VAT
ԱՂԱՍՏՐԳԻՍԵԱՆ ՀԱՍ. ՊԵՆՏԱՆԻ Բաղարատի Կրտսերային Գործարան
ԳՈՐԾԱՆԵՆԻ 01-241000
TOSHIBA

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ
ԱԶԳԱԿ
ՀԻՇՄԱԿԱՆ 7 ԵՄԻՆԱԼԵԱԿ 2002
SARKIS & HAGOP LOUSSARARIAN
We wish you a warm Christmas & a healthy New Year
«ԱԶԳԱԿ» 2003Ի ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԲԱՅԱՌԻԿԸ

ԿԱՄՈՒՐՋՆԵՐՈՒ ԵՒ ՃԱՄԲԱՆԵՐՈՒ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հանրագուտ շինությունների և փոխադրամիջոցներու հարցերու նախարար Նեմիայ Միքայելի երկհամարյալ ժողովի մը, որուն ընթացքին քննարկուեցաւ կամուրջներու շինութեան և ապահովութեան թղթածրարը, ինչպէս նաեւ նախարարութեան հասած բոլոր բողոքները, որոնք կ'անջուրին գիւղերու ճամբաներու շինութեան և փոթորիկներուն պատճառած վնասներուն:

Միքայելի իր որոշումները և ուղղութիւնները փոխանցեց ծովային և ցամաքային փոխադրութեան տնօրէնութեան, որպէսզի անմիջապէս որդեգրեն հարկ եղած դասաւորումները և բարելաւեն վնասներն ու ձեռնարկներուն օժանդակութիւն տրամադրեն:

Միքայելի գրուած ճամբաներու ձեռքը մաքրող խումբերուն աշխատանքը, յատկապէս Տահր էլ Պայտարի մէջ:

Միքայելի շեշտեց, որ «Ֆիւթիւրսթիֆ»-ը «Շեփրոյ» երկարող ինքնաշարժներու կամուրջը կը գտնուի լաւ վիճակի մէջ և երբեք սպառնալիք մը չէ անցորդներուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՓԻԻՒԻ ԵՒ ՉԱՅՆԱՍՓԻԻՒԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Խոր կսկիծով իմացանք Տիգրան Նաղդալեանի պաշտօնական լուրը: Այս ոճրային արարքը հարւած մըն է ուղղուած՝ հայրենի պետականութեան կայացման գործընթացին, ինչպէս նաեւ ժողովրդավարութեան հաստատման երթին: Այս եւ նման պատահարներէ կ'օգտուին միայն մեր թշնամիները:

Մեր խորին ցաւակոթիւնները կը յայտնենք Տիգրան Նաղդալեանի հարապատմելուն և Հանրային Պատկերասփիւռի և Չայնասփիւռի կայաններուն աշխատակիցներուն: Այս ոճրային դէպքին հեղինակներուն բացայայտումը անհրաժեշտ է, երաշխաւորելու համար հայաշխարհի մէջ հայ մտքի անկշարժ պարզացումը և հայրենակերտումի սրբապան առաքելութիւնը:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ
ԼԻԲԱՆՍԻԻ ՎԱՆԱՅ ՉԱՅՆԻ
ՌԱՏԻՈԿԱՅՆԻ

30 Դեկտեմբեր 2002

ՄԱՀԱՉԴ

Տիկին Մատիւն Սեփէթեան և գաւազը Գեորգ Տիկին Վարդուհի Սեփէթեան
Օրդ. Մարկո Սեփէթեան
Տէր և տիկին Յարութիւն Սեփէթեան և գաւազուհի

Տէր և տիկին Մովսէս Եփրեմեան և գաւազուհի
Տէր և տիկին Կարո և Մարո Քիրիաքոս և գուստոր
Տիկին Աշխէն Պետրոսեան և գաւազուհի
Տէր և տիկին Ներսէս Հայկապետ և գաւազուհի
Տէր և տիկին Հանրի Շնորհաբեան և գաւազուհի
և համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, գաւազուհի, եղբոր և հարազատին՝

ԴԱԻԹ ՍԵՓԷԹԵԱՆԻ (Ծնեալ՝ 1953ին)

անկանկալ մահը, որ պատահեցաւ Կիրակի, 29 Դեկտեմբեր 2002, առաւօտեան ժամը 3:00ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի, 30 Դեկտեմբեր, կէսօրու ժամը 12:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապը:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին եղբոր բնակարանը, Չայքա, Հարպոյեան շէնքեր, պլոք D, 4րդ յարկ:
- Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւն կատարել Մ. և Հ. Արսլանեան ձեռնարանի անունը ֆոնտին:

ՄԱՀԱՉԴ

Տէր և տիկին Ռիչարդ Հարաբեան և գաւազուհի
Տէր և տիկին Ժորժ Ռոստամ և գաւազուհի
Տէր և տիկին Ալեքս Գուրգէնեան
Տիար Վահէ Եսգուպեան
Տէր և տիկին Կարպիս Թաթիւսեան
և համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, գորանչին, քրոջ և հարազատին՝

ՇԱԲԷ ՓԱՇԱՊԷԶԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 29 Դեկտեմբեր 2002ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի, 31 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրրի Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապը:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ժրտէյտե, «Շիրապ» շէնք, փաթիւտերի «Լա Ռիւշ» ղիմաց, Երեքշաբթի 31 Դեկտեմբեր, Չորեքշաբթի 1 և Հինգշաբթի 2 Գեղարարին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ՄՁՆՈՒՈՐՏԸ ԲՆԱԿԱՆ ԴԱՐՁԱԾ Է

ԿԸՍԷ ՖՐԵՆՏԻԷ

Մարտինիներու Պուլթրոս Սֆէյր պատրիարք երէկ Պէրթէի մէջ ընդունեց առողջապահութեան նախարար Սլէյման Ֆրենտիէն, որուն հետ քննարկեց լիբանանեան ներքին բեմը յուզող հարցեր: Ֆրենտիէն ընկերակցեցան երեսփոխան Քայսար Մուսաուտ և փաստաբան Ժոզէֆ Արաժփի:

Հանդիպումէն ետք Ֆրենտիէն ընդգծեց, որ կառավարութեան փոփոխութեան միջոցով զարձած է ընկալան և իրական երեւոյթ, սակայն ան շեշտեց, որ եթէ նախարարաց խորհուրդը չվերակենդանանայ, անկարելի է կատարել կառավարութեան փոփոխութիւն: Ֆրենտիէն աւելցուց, որ եթէ քաղաքական ուղեգիծը կը պարտադրէ, որ հանրապետութեան նախագահին նստաշրջանը վերանորոգուի, ինք համաձայն է:

Ֆրենտիէն ըսաւ, որ Լիբանանի մէջ քաղաքական նուազութիւնը կը գտնուի սառած վիճակի մէջ և չըջանային կացութիւնն է, որ կ'ազդէ ներքին կացութեան:

Ֆրենտիէն նշեց, որ իշխանութեան երեք պետերուն արձակուրդին ընթացքին երկիրը կը հետեւի միայն իրաքի հարցի արձանագրած գարգարձանագրութեան և հարաւորին Լիբանանը ուժակոծելու իտրայէթեան մատուցելու:

մուլին սպառնալիքներուն: Պատասխանելով պետական պիւտճէին նախագիծին վաւերացման հարցումի մը՝ Ֆրենտիէն յայտնեց, որ առողջապահութեան նախարարութեան պիւտճէն նոյնը մնացած է և շնորհակալութիւն յայտնեց այդ իրականութեան համար:

Ֆրենտիէն շեշտեց նաեւ, որ հարկ է գործադրել Թաէֆի համաձայնագիրը ամբողջութեամբ, յատկապէս ինչ կը վերաբերի կառավարութեան գործունէութեան օրէնքներուն:

Սֆէյր պատրիարքի այցելեց նախկին նախարար Ֆուատ Պուլթրոս, որ պատրիարքին հետ քննարկեց շրջանային և միջազգային իրադարձութիւնները:

45 վայրկեան տեւած հանդիպումէն ետք Պուլթրոս ներկայ կացութիւնը օրակէց «տակնուվրայ» վիճակ:

Պուլթրոս Սուրիոյ հետ երկխոսութեան մասին հարցումի մը պատասխանելով՝ ըսաւ, որ նախագահ Հազուտ հովանաւորած է երկխոսութիւնը և ոչ թէ սկսած զայն: Ան նկատել տուաւ, որ այս իմաստով պայմանները կը դրուին միայն նախագահ Հազուտի կողմէ:

Պուլթրոս նկատել տուաւ, որ ներկայ իրադարձութեանց մէջ նոր կառավարութեան մը կազմութիւնը հարցին լուծում մը չի կրնար ըլլալ, որովհետեւ հարցը անհատական չէ, այլ կը կարօտի ներքին և արտաքին հարցերու լուծման նոր ձեւերու:

Սֆէյր պատրիարքի հիւրերէն դարձաւ նաեւ երեսփոխան Ֆարէս Պուլթրոս: Ան հերքեց կարգ մը օրաթերթերու հրատարակած այն տեղեկութիւնները, թէ ինք ուղղուած է վատիկան, ուր տեսակցութիւն ունեցած է պաշտօնատարներու հետ և անոնց փոխանցած Սֆէյր պատրիարքի և Քրքնէթ Շահուանի Հանդիպումին կեցուածքները:

Պուլթրոսը հաստատեց, որ կը հաւատայ Մարտինի եկեղեցւոյ իրաւասութեան՝ արտայայտելու Լիբանանի անկախութեան, գերիշխանութեան, Ժողովրդավարութեան և արդարութեան իր պատկերացումին մասին:

ՍԱՐԻԿ ԱՐՄԵՆԵԱՆ
ընդ
ՊԵՏՕ ՏԵՍԻՐՃԵԱՆ
Խօսեցեալք
Ուաշինկթըն
28 Դեկտեմբեր
2002

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ
• Խաչիկ Սարգսեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի Այնճարի Սեւ Գօտիներու Միութիւնը 25.000 Լ.Ո. Թնչնոց Բոյնին:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ԿԸ ՍՊԱՌՆԱՆ՝ ՅԻՇԵՑՆԵԼՈՎ ԻՐԵՆՑ ՊԱՅՆՁՆԵՐԸ

Երկրորդական կարգերու ուսուցիչներուն և հանգստեան կոչուած ուսուցիչներուն գերագոյն խորհուրդը երէկ պահանջեց կրթութեան և բարձրագոյն ուսման նախարար Ապուէլ Ռահիմ Մըրատէն, որ հանգստեան կոչուած ուսուցիչներուն հատուցումները վճարուին երկու անգամով. առաջինը յառաջիկայ Յունուարի ընթացքին, իսկ երկրորդը՝ Յունուարի Ապահովագրութեան Ազգային Մտտուկին, վճարուին անոնց փոխարձակութեան՝ գողւածացնելով, որ եթէ նշեալ պահանջները չգործադրուին, ուսուցիչները պիտի կասեցնեն դասաւանդութիւնները և պիտի յայտարարեն ընդհանուր դասադուլ պետական բոլոր վարժարաններէն ներս Յունուարի կէսէն սկսեալ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

• Կրթութեան նախարարութեան ընդհանուր տնօրէն Ժորժ Նամմէ և արհեստագիտական կրթութեան ընդհանուր տնօրէն Եուսէֆ Տիա յայտնեցին, որ հիմնուելով վարչապետ Ռաֆիք Հարիրիի ուղղած թիւ 35 շրջաբերականին վրայ, որուն հիմամբ, Երկուշաբթի, 6 Յունուարին պետական բոլոր վարչութիւնները, հաստատութիւնները և քաղաքապետարանները փակ պիտի մնան հայկական Ս. Մննդեան տանին առիթով, Յունուարին փակ պիտի մնան նաեւ պետական վարժարանները:

Այս որոշումը գործադրելու համար կրթութեան և բարձրագոյն ուսման նախարար Ապուէլ Ռահիմ Մըրատ նաեւ թիւ 342 շրջաբերականով յայտնեց, որ պետական և արհեստագիտական բոլոր վարժարանները փակ կը մնան Երկուշաբթի օր: Դասուանդութիւնները կը վերսկսին Երեքշաբթի, 7 Յունուարին:

• ՆԵՐՔԻՆ գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Ելիաս Մըր հրապարակեց շրջաբերական մը, որուն մէջ պահանջեց օրէնքի տրամադրուի քաղաքացիները, որոնք կը կրեն տարօրինակ նշաններ և թիւեր՝ խախտելով օրէնքը:

• ԸՆԿԵՐՎՈՒՄ Յառաջդիմական կուսակցութիւնը երէկ պաշտօնական հարցազրույթներով մը շեշտեց, թէ պատկերասփիւռի «ԼՄ. Թի. Վի.» կայանը վերջնականապէս փակ պահելու վճարեկ ատենին որոշումը հարցին լուծում մը չեղաւ, այլ պատճառեց նոր վէճեր և հարցեր, թէ՛ Լիբանանի մէջ տեղեկատուութեան ազատութիւններու ապագան ո՞ր պիտի հասնի և զատական իշխանութիւններուն ազատութիւնները որքանով իրագործ են նման վճիռներ արձակելու:

• ԱՐՏԱՔԻՆ գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ելիաս Մըր ընդհանուր տնօրէն Մոհամետ Իսա երկէր ընդունեց Իտալիոյ արտաքին գործոց նախարարութեան Միջին Արեւելքի հարցերու տնօրէն Անթոնիո Անտոնիոյ հետ լիբանանցի Լիբանանի մէջ Իտալիոյ դեսպան Ֆրանքո Միաթրիքայի:

• ԵԼԵԻՍՈՒՏՔԻ և պիւտճէի երեսփոխանական

յանձնախումբը երէկ վաւերացուց Ապապետականացման Գերագոյն խորհուրդին և բարգաւաճման ու վերաշինութեան խորհուրդին պիւտճէները:

Խորհրդարանին մէջ կայացած ժողովին նախագահեց յանձնախումբի նախագահ երեսփոխան Մամիր Ազար, ներկայութեամբ էլեւմուտքի նախարար Ֆուատ Մինիոյրայի և բազմաթիւ երեսփոխաններու, ինչպէս նաեւ վերաշինութեան և բարգաւաճման խորհուրդի նախագահ Ժամալ Իթանիի, Ապապետականացման Գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Զաքի Եուսէֆի և պիւտճէի տնօրէն Ելիաս Շարպէլի:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ

Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ
Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի Սուրբ Ծննդեան տօնին առիթով, Երկուշաբթի, 6 Յունուար 2003ին, հանդիսաւոր սուրբ և անմի պատարագ պիտի մատուցուի Սուրբ Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ: Պիտի պատարագէ և քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ
Առաջնորդ Լիբանանի Էպիսկոպոս
Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 7:30ին
Ս. պատարագ՝ ժամը 9:00ին
Քարոզ՝ ժամը 10:30ին
Ջորոհնք՝ ժամը 11:30ին

Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի ժողովուրդը՝ ներկայ գտնուելու սուրբ պատարագին, հաղորդուելու ու զօրանալու համար Բեթղեմեան խորհուրդով:
ԴԻԱՆ ԱՉԱՅԻՆ ԱՆԱՋՆՈՐԴԱՐԱՆ

ՄԱՀԱՉԴ

Տրքթ. Միսաք Ճապարայեան
Օրդ. Լիւսի Ճապարայեան
Տիար Մեղրակ Ճապարայեան
Տէր և տիկին Եփրեմ Նահապետ և գաւազուհի
և համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր, մեծ հօր, աներոջ և հարազատին՝

ՄԱՐՏԻՐՈՍ ՃԱՊՐԱՅԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 30 Դեկտեմբեր 2002ին, իր բնակարանին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի, 31 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապը:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Տարա, «Էրգ» շէնք, Չորեքշաբթի 1 և Հինգշաբթի 2 Յունուարին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Ճաշկերոյք Պարահանդէս

Կիրակի, 5 Յունուար 2003
Երկուշաբթի ժամը 9:30էն սկսեալ
PHOENICIA ղանդոկին մէջ

Երգահանդէս
Երկուշաբթի, 6 Յունուար 2003,
Երկուշաբթի ժամը 7:30էն սկսեալ,
UNESCO-ի սրահին մէջ

Տոմսերը կարելի է ստանալ հետեւեալ կեդրոններէն - Obelisk գրախանութ. Անթիլիաս Աղբալեան մարզաշախմատի կեդրոն, Արգիտ - Համազգայինի գրախանութ, Շաղկապեան կեդրոն, Պուրճ Համուտ - Տիգրան Գեկա, Պուրճ Համուտ - Սփիւտի Վաչէ, Երկաթ կամուրջի մօտ. Հանդը - Համազգայինի «Կոմիտաս» գրախանութ, Չըքաք Էլ Պլաք - Համազգայինի Լեւոն Շանթ կեդրոն, Պուրճ Համուտ

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

ՊԵՏՈՒԹԻՆԸ ԿԸ ՓՈՐՁԷ ԾԱՆԱԳՈՐԾԵԼ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կ'ԸՍԷ ԲԸՐՆԵԹ ԾԱՆՈՒԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՓԱՌԻԼՈՍ ՈՒ ՉԱՔՔԱ ՊԱՏՐԻԱՐԲՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Արևելյան Ուղղափառ եկեղեցւոյ ընտանիքին երէկ հոգեւոր պետերուն հանդիպումը տեղի ունեցաւ Ծաքաթ, 28 Դեկտեմբերին, Անթիլիասի մայրավանքին մէջ: Ինչպէս ծանօթ է բոլորին, քանի մը օրերէ ի վեր Անթիլիաս ժամանած է Եթովպիական Ուղղափառ եկեղեցւոյ պատրիարք Ապունա Փաուլոս: Նոյն առիթով, Անթիլիաս ժամանեց նաեւ Ասորական Ուղղափառ եկեղեցւոյ պատրիարք Չաքքա Ա. Իուսա: Արամ Ա. եւ երկու պատրիարքները քննարկեցին ընդհանրապէս քրիստոնէական եկեղեցիները եւ յատկապէս Արևելեան Ուղղափառ եկեղեցիները յուլոյ հարցեր, միասնական ճիգով դիմագրաւելու համար ժամանակի մարտահրաւերները: Քննարկումի նիւթ դարձան նաեւ յառաջիկայ գործակցութեան կարելիութիւնները: Ժողովի երկրորդ բաժինին միացան նաեւ երէկ եկեղեցիներու սինտոսի անդամ եպիսկոպոսները, իրենց տեսակետները պարզելու յառաջիկայ աշխատանքներու մասին:

Ժողովէն ետք, Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս պաշտօնական ճաշկերոյք տուաւ ի պատիւ Փաուլոս պատրիարքին ու Չաքքա պատրիարքին, որ ընդառնելով վեհափառ հայրապետին իրաւերին՝ Դամակոսէն եկած էր անձամբ ողջունելու համար Եթովպիական եկեղեցւոյ հոգեւոր պետը: Մայրավանքի սեղանատունը քանի մը ժամուան համար միջեկեղեցական հանդիպման վայրի մը վերածուեցաւ, մասնակցութեամբ ընթրիքին ներկայ եղող աւելի քան 100 հրաւիրեալներու, որոնք կը ներկայացնէին Արևելեան Ուղղափառ քոյր եկեղեցիները: Ներկայ էին նաեւ մեր եկեղեցւոյ կեանքին մէջ գործող ապագայիները:

Վեհափառ հայրապետը ողջոյնի խօսքով իր ուրախութիւնը յայտնեց եղբայրական այն ջերմ սիրոյն համար, որ Արևելեան Ուղղափառ եկեղեցիները ունին իրարու նկատմամբ, եւ այս հանդիպումը նկատեց անոր շօշափելի մէկ արտայայտութիւնը: Իր խօսքին աւարտին, վեհափառ հայրապետը թանկարժէք ձեռաց խաչ մը նուիրեց Փաուլոս պատրիարքին:

Չաքքա Ա. պատրիարք իր խօսքին մէջ վեր առաւ Արամ վեհափառին եկեղեցական ու միջազգային մեծ դեկամբարին արժանիքները եւ վեհափառին պատգամը նկատեց նոր շրջանի մը ուղեգիծ Ուղղափառ եկեղեցիներու ընտանիքին համար: Ան եղբայրական սիրով ողջունեց Փաուլոս պատրիարքը:

Փաուլոս պատրիարք արդարութեան եւ մարդկային իրաւանց հետապնդման գոյով մեծ դեր վերապահուած տեսաւ քրիստոնէական եկեղեցւոյ, որուն մէջ Ուղղափառ քոյր եկեղեցիներու ընտանիքը միասնական կեցուածք պետք է ցուցաբերէ: Իր խօսքին աւարտին Փաուլոս պատրիարք նուիրեց փոխանակեց վեհափառ հայրապետին ու Չաքքա պատրիարքին հետ:

Քըրնէթ Ծահուանի Հանդիպումը երէկ երեկոյան գումարեց արտակարգ նիստ մը, որուն ընթացքին դատաւարտեց պատկերասփիւռի «Եմ. Թի. Վի.» կայանի վերջնական փակման մասին տրուած որոշումը եւ ընդգծեց, որ պետութիւնը կը փորձէ դատական իշխանութիւնները շահագործել քաղաքական որոշում մը պարտազրկելու համար դատական ատենաներու ճամբով՝ ճնշելու համար երկրին ազատութիւնները: Երեսփ Պշարա եպիսկոպոսի նախագահութեամբ ժողովը յայտնեց, որ դատական իշխանութեանց վրայ ճնշումները վտանգաւոր երեւոյթ մըն է եւ անկարելի է զանոնք կասեցնել, եթէ գոյութիւն չունենան արի դատախազները:

ՃՇԴՈՒՄ

Երկուշաբթի, 30 Դեկտեմբերի Չաւարեանական էջին մէջ լոյս տեսած «Ալգային տնտեսութեան կազմաւորումի հարցեր» յօդուածին մէջ սարդած է սիւսի մը:

Յօդուածին շարունակութեան մէջ՝ էջ 8, երրորդ պարբերութեան 10րդ տողը պէտք է կարդալ:

«Հայաստանի արդիւնաբերական համալիրի ամբողջական վերագործարկման կամ կազմաւորման համար, արտերկրեայ ներդրումները անխուսափելի են, յատկապէս՝ արդիւնաբերական միջոցներու վերասարքաւորման եւ արդիականացման հրամայականներու առկայութեամբ: Իսկ ներկայ աշխարհակարգի տնտեսական եւ քաղաքական զոյգ հոլովոյթներու իրստ համապատասխանելիութեան կանոններով, ներդրումներու անհրաժեշտութիւնը պայմանաւորում է նաեւ երկրի պաշտպանողական նկատառումներով»:

ՊԱՂՏԱՏ ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ...

Շարունակուած Ա. ԷջԸԶ

Գի պաշտօնատարներ: Քննութեան ենթարկուեցան նաեւ հարաւի մէջ քանի մը կերպարներ:

Այն պահուն, երբ քննիչները կը շարունակէին քննութիւնները, «Պապէյ» օրաթերթը կոչ ուղղեց արաքներուն ու իսլամներուն՝ գործնական քայլերու դիմելուն, օժանդակելու համար Իրաքին, եւ չբարարարելի կոչերով: «Պապէյ» աւելցուց, որ արաքական երկիրները պէտք է միացեալ ճակատով մը ուղեկանէին իրար հետ: Միացեալ ճակատով մը ուղեկանէին իրար հետ: Միացեալ ճակատով մը ուղեկանէին իրար հետ: Միացեալ ճակատով մը ուղեկանէին իրար հետ:

Arabic header with logos: البيرق, السيف, الخمار, الدمار, المستقبل, الخوار

Տեղական մամուլը իր երէկուան թիւով գլխաւորաբար անդրադարձած է լիբանանեան կեանքը յուլոյ պահանջներու, իրաքեան հարցին եւ պաղեստինեան տագնապին:

«Նահար» գրած է, թէ Քըրնէթ Ծահուանի Հանդիպումը 30 Դեկտեմբերին կը քննարկէ միջազգային ատենանի մը դիմելու կարելիութիւնը: Ըստ թերթին, պիտու է նախագիծը եղած է վարչապետ Հարիրիի եւ Ժոնաթանի քննարկման առարկան: Թերթը նաեւ նշած է, թէ լիբանանի պայմանագիրով աշխատող ուսուցիչներուն հարցին աննշուած լուծում մը գոյացաւ:

«Մուսթաֆայա» գրած է, թէ Ժոնաթանի արտաքին գործերը Քըրնէթի արտաքին գործերէն աւելի անկախ են: Քըրնէթի արտաքին գործերը Քըրնէթի արտաքին գործերէն աւելի անկախ են: Քըրնէթի արտաքին գործերը Քըրնէթի արտաքին գործերէն աւելի անկախ են:

«Տիար»-ի համաձայն, Երեւանի շրջանի Հարպ տեղեկութիւնները կը փոխանցէ «Թեյէ Լիպան»-ի եւ «Մուսթաֆայա»-ի օրինակով: Ըստ թերթին, կապուած է լիբանանեան կեանքը յուլոյ պահանջներու, իրաքեան հարցին եւ պաղեստինեան տագնապին: «Մուսթաֆայա»-ի օրինակով, Քըրնէթ Ծահուանի Հանդիպումը 30 Դեկտեմբերին կը քննարկէ միջազգային ատենանի մը դիմելու կարելիութիւնը: Ըստ թերթին, պիտու է նախագիծը եղած է վարչապետ Հարիրիի եւ Ժոնաթանի քննարկման առարկան: Թերթը նաեւ նշած է, թէ լիբանանի պայմանագիրով աշխատող ուսուցիչներուն հարցին աննշուած լուծում մը գոյացաւ:

Դառնալու համար վերջին տրուութիւններուն: Ըստ թերթին, շարք մը քննարկումի նիւթ կը դառնան ամբողջ արձակուրդին տեւողութեան: Թերթին համաձայն, պատրիարք Սֆէյր ըսաւ, թէ գոյութիւն ունին շատ մը հարցեր, որոնք մեկ չեն գոհացնել, սակայն անոնք պէտք չէ փախչելու կամ հեռանալու պատրուակ ծառայելու:

«Սաֆիր»-ի համաձայն, Քըրնէթ Ծահուանի Հանդիպումը կ'ամբաստանէ իշխանութիւնը երկխօսութեան ջերմ մթնոլորտը չկարենայ գոյացնելու ինչնչանքով: Թերթը գրած է, թէ պիտու է նախագիծը դարձաւ Հարիրիի եւ Ժոնաթանի միջեւ քննարկումի առարկայ: Երաբերութիւնը կը շարունակուի համախոհութեամբ եւ ... տարակարծութեամբ: «Պարապ»-ի համաձայն, Լախուտ կապի մէջ մնաց Պըրրիի, Հարիրիի եւ նախարարներու հետ իրապէս

«Պարապ»-ի համաձայն, Լախուտ կապի մէջ մնաց Պըրրիի, Հարիրիի եւ նախարարներու հետ իրապէս

«Պարապ»-ի համաձայն, Լախուտ կապի մէջ մնաց Պըրրիի, Հարիրիի եւ նախարարներու հետ իրապէս

«Լիուս»-ի համաձայն, իւրաքանչիւր փամփուշտներ կը հաւածեն երեխաները՝ կապալի եւ թուրքարմի մէջ երկու մեռելու արձանագրելով: Ըստ թերթին, Շարուն կը իրաւաստեց կարծազրնել «գործողութիւններ»:

Ըստ «Լիուս»-ի, Փաուլոս կ'ըսէ. «Պուշտակաւին որոշում չէ տուած... պատրաստութիւններ կը կատարուին առ ի պուշտակաւին»:

«Սանտէյ Էքսպրէս»-ի համաձայն, Իրաքի դէմ պատերազմը կը սկսի 21 Փետրուարի կէս գիշերին:

«Սահար»-ի համաձայն, Ուաշինկթըն կը ծրագրէ տնօրինել իրաքեան քարիւղը եւ կը ստանայ Էտուսկան Արաքիոյ համաձայնութիւնը՝ վերջինին հողային տարածքները գտագործելու: (ԱՅՓ)

Advertisement for LNB SUSA - Z.S.R.S. 2003. Includes logo and text: Հ.Ս.Ը.Ս. ԸՆՈՐՀԱՌՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՂ ԼԻՒՆԱՆ 2003 ՍԱԿ՝ 10.000 Լ.Ո.

Advertisement for MAISON GABY Home Appliances. Lists products like Gaz Heater, STEREO, LEIFHEIT, DVD-JG, Braun Silk-epil, TOSHIBA, SAMSUNG, SANYO, VACUUM CLEANER, TEFAL/ASEB, FAGOR/OMACH. Contact: 01/261630

Advertisement for FUEL CARD. Text: ՓԻՆԿ ՓՈՆԿԻ ԴԱՍԵՆԹԱՅԸ «ԱՂՔԱԸԵՆ - Հ.Ս.Ը.Ս.» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻԲԵՆ ԵՐԲ Փորձեր՝ ամէն Ծաքաթ օր կեսօրէ առաջ ժամը 9:00է 11:00 եւ 11:00է կեսօրէ ետք ժամը 1:00, ըստ տարիքային բաժանումի: Մարզի՝ Լիբանանի փինկ փոնկի ատոյեան՝ ԼԻՉԱ ՊԱՐԻԿԵՆ: Արձանագրութիւն՝ մինչեւ 10 Յունուար, ամէն Երեւանի եւ Կիւրաքի, «Աղբայեան - Հ.Ս.Ը.Ս.» մարզամշակութային համալիր կամ հեռաձայնել՝ 03-262691 թիւին: Հ.Ս.Ը.Ս. ԱՆԹԻԼԻԱՍԻ ԿԱՐԳՈՒԹԻՒՆ

Large advertisement for FUEL CARD. Text: ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԶԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ 3աւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ԱՊԱՀԱՅԱՅՄԱՆ ԿԵՐՄԱՆՆԵՐԸ ԿԸ ՏԱՆԻՆ ԱՆԴՈՒՆԴ...

Վերապրումի եւ գոյատևման խնդիր ունի ազգը, գայն դիմագրաւելու կոչուած գաղափարախօսութիւն չունի: Ոմանք կը կարծեն որ ունին, ազգը շփոթելով ընտանիքի կամ ընկերակաւ կծկուած շրջանակի հետ: Կղզեբնակի եւ կղզիացման անհեռանկար եւ անվաղորդայն վերաբերում: Սեփական կացութիւններու լուծում գտնելու խորխորումներու ականատես կ'ըլլանք, ներազգային քարտէսի բոլոր կէտերուն վրայ, կեր հայթայթելով երէկուան եւ այսօրուան մրցակցութիւններու որոնք պատուար են ազգային խորքով ճիշդ հարցադրումներու եւ անոնց պատասխաններու որոնման:

Երէկ կը հաւատայինք, որ իրրեւ ազգ մեր գոյատևումը կ'երաշխաւորուէր մեր լեզուով, մշակոյթով, պատմութեան գիտակցութեամբ՝ որ կը փոխանցէ ազգի իրաւունքին տէր կանգնելու համոզում: Այսօր այլ հաւատացողներ կան: Բայց ներկայիս, հայ նոր լրվանթէն շրջանակներուն մէջ կը գարգանայ, հայ ապահայացնող մտածումը, որ սերունդ փրկելու համար անհրաժեշտ է երթալ դէպի անոր հետաքրքրութիւնները, շրջապատին ստացած ազդեցութիւնները եւ արժէքները, որոնք երէկ կեզարայական էին, ոչ մամիկոնեանական, ոչ քրիստոսափորական, ոչ գաւարեանական, իսկ այսօր, գաղափարաբանութիւններու տեղատուութեան, սպառողական ընկերութեան եւ համաշխարհայնացման իրրեւ հետեւանք, օտարախօսական, մամիկոնական, ճազական: Լրվանթէնները չեն ըսեր թէ ինչ կ'ուզեն փրկել, ինչու, ինչ ընելու համար, ո՛ր երթալու համար, ո՛ր կը գետեղեն ազգային բովանդակութիւնը: Լրվանթէնականութեամբ բացատրուող այս կացութիւնը նկատի չունի միայն շեշտակիորէն քաղցրեկեղծ հասարակութիւնը, այլ նաեւ պարզ մարդոց գանգուածը: Եթէ երիտասարդութիւնը համարձեցնու համար արդիւնաւէտ միջոց կը համարենք թամթամ-ճազը, որպէս յառաջդիմութիւն եւ գործնապայտակար պատշտեցում, ինչո՞ւ ուրիշ բնոյթ ունեցող գանգուածները չհրաւիրել արեւելեան եւ թրքական երգ-երաժշտութիւն լսելու եւ... ներգրաւելու, եթէ չափանիշ է համարանքը: Արդէն ճաշկերպութեամբ պարահանդէսներու մեծ մասին յաջողութիւնը այդպէս պայմանաւորուած է: Պարզ է խորխորումներով յատկանշուող նախաձեռնութիւններուն կը պակաս ազգային գաղափարախօսութիւնը: Երբ որոշողներու մակարդակին - հաւանաբար ոչ իրենց մեղքով - կը բացակայի ազգային գաղափարախօսութիւնը, դիւրաւ կը հասկնանք մեր ընթացքը ապահայացման կերմաններուն վրայ: Իսկ առանց անոր՝ ինչ նկարագրով սերունդ կամ հաւաքականութիւն կ'ուզենք առաջնորդել կամ պահել, մանաւանդ ինչո՞ւ: Հայկական նոր ժամանակի մեծագոյն հարցերէն մէկն է լրվանթէն հոգեբանութեան դէմ պայքարը, նկատի ունենալով ազգը:

Այս խորխորումներուն իսկական դրդապատճառները կ'ուզենք յայտնաբերել: Գծափտարար՝ ոչ, դիրք պահելու, հանգամանք նուաճելու եւ դեռ այլ սխրութիւններու պատճառով: Ճեղքերը գոցելու հակազգային քաղաքականութիւնը յաջողութիւններու գնահատման նոր արժեքափեր հրապարակ նետած է: Այսպէս, կարելու թիւով երիտասարդներ կը խմուրին, ամբողջ գիշերը կը գուրճանան հայերէնի չնմանող երգերով, առանց մէկ բառ հայերէն արտասանելու, թամթամ-ճազով, եւ յաջողութեան չափանիշ կը համարուի համարանքը: Բայց ապահայ բովանդակութեամբ ձեռնարկին համարանք ապահովելու համար միթէ՞ հայածնուող ըլլալ նշանակութիւն ունի: Ներագգային դասաւորումները այնպէս են, որ բնախնդրութիւնը կը համարուի խստապահանջութիւն, անհանդուրժողութիւն, ժամանակի բմբունումներուն դէմ աղանդաւորութիւն: Եւ կը փակուին դռները ազգային գաղափարախօսութեան առջեւ, որ պիտի ներշնչէր եւ առաջնորդէր նախաձեռնութիւնները, գանոնք դուրս բերելով լրվանթէններու խնայապատիկէն ծնող տատանումներէն: Տեղ մը գնացքը երկաթ գիծէն դուրս եկած է, բայց մենք դեռ հանգիստ նստած ենք գնացքին մէջ, քանի որ կառքը շուտ է կ'առնէ...

Ֆրանսական ասութիւն մը յաճախ լսած եմ եւ իմ հերթիս՝ կրկնած. անհրաժեշտ է ցուր բռնել կոտորներէն: Վերականգնելու, գոյատևելու համար իրրեւ ազգ, ազգային իրաւունքներու ձեռքբերումը ապահովելու համար, ազգային ստորագրելիներով հարկ է ծնունդ տալ հայախորք ուժականութեան, եւ պղպղակները չհամարել յառաջդիմութիւն, որ լրվանթէնական ինքնագոհութեան եւ հանգամանքներուն կ'ուզէ հազցնել ազգային գոյնով կեղծ տարազ, որ իրապաշտօրէն դիտուած, հակազգային գապաշտակ է:

Ցուր բռնել կոտորներէն: Կ'ուսենանք այդ քաղցրութիւնը եւ կամքը...

3. ՊԱԼԵԱՆ

PHOTO NERSES

ԱՐԱԳ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ - ՈՐԱԿՎԻՏՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Չեն ուրախ առիթներու լուսանկարները տպեցն ենք հասած ԱՐԱԳԱԿԱՆ DIGITAL մեքենայի միջոցով որակաւոր եւ գանգամ լաիկով:

Ստանձնում՝ 20 վայրկեանով:

Լուսանկարները կ'արձանագրենք CD-ի կամ FLOPPY տիպիներու վրայ:

Camera-ներու ճոխ հաւաքանք:

Այլուծում եւ օճախի շքեցանքներու քննարկ տեսակով:

Կը ստանձնենք ուրախ առիթներու photo ցկարահանումը:

արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիմերով:

Պուրճ Կանուտ, Քաղաքապետարանի փողոց, «Սամբըր Արիմ» ի դիմաց, Կեռ. 01-261858 եւ 01-255992

ՏԱՐԵՓԱԿԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

2002 թուականն ալ անցաւ: Տարին անցաւ, որովհետեւ պիտի անցնէր: Փիլիսոփայելու կարիք չկայ: Բոլոր «ծնունդները» ենթակայ են մեռնելու, մարդ ըլլալ թէ անասուն, բոյս ըլլալ թէ ժամանակ: Յաւերթական կը թուի ըլլալ ԱՇԽԱՐՀ հասկացողութիւնը, որուն համար ալ յաճախ կը կրկնուի «աշխարհի վերջը եկաւ» բանաձեւ մը: Հաւատալ կամ ոչ, ճաշակի հարց է անպայման:

Չէ՞ք կարծեր որ բոլոր տարիները իրարու կը նմանին, կու գան ու կ'երթան: Բայց ամէն անգամ որ «նորոգուի» տարին, մեր կարգին կ'ունենանք նորոգուելու բաղձանք կամ ցանկութիւն: Անցնող տարին, որ հարկէ 12 ամիս առաջ նոր էր ու նորոգուած, մաշած է հիմա, հին տարի է բոլորին համար:

Մ ան ու կ ն եր ու հրճուանքով, մանուկներ, որոնք նուէր մը ստանալու երազով կը ստորին, մեծերն ալ կը խլորտինք հոգեւոր սրտով, առասպելական սուտին ու իրաւին միջև որոտու: Մեծերն ալ չարփով մը կը մանկանան, ու կ'երգանք բարիք, հարցստութիւն, երիտասարդանալ, մնալ առողջ:

Տարիները ունին իրենց տարեդարձները, գոր անուանած ենք կազմող կամ նոր Տարի: Կը տօնենք գայն լուսաւոր մոմերով, տօնածառով, քաղցրահամ սեղաններով, երգ ու պարով, ցնծութեամբ: Երանի անոր, որ այս ամբողջ իրնայ ամփոփել մէկ գիշերուն մէջ եւ ցնծալ ինքն իր եւ իր հարազատներուն հետ: Բայց կայ նաեւ մետալին միւս կողմը. կայ դասակարգ մըն ալ, որ այլ քանակ կը բերէ անցնող տարուան պատահարները, իր

ըրածն ու չըրածը, կը խոստանայ ինքն իրեն եւ անշուշտ՝ Աստուծոյ, ըլլալ կատարելալ մարդ, հայրենասէր հայ, հայ դպրոցը յարգող ու սիրող հայ:

Գաղտնիք չէ, որ իրրեւ հայ մարդ այնքան ալ ամբողջական ու ընկան չեթական կը թուի ըլլալ ԱՇԽԱՐՀ հասկացողութիւնը, որուն համար ալ յաճախ կը կրկնուի «աշխարհի վերջը եկաւ» բանաձեւ մը: Հաւատալ կամ ոչ, ճաշակի հարց է անպայման:

Մ ան ու կ ն եր ու հրճուանքով, մանուկներ, որոնք նուէր մը ստանալու երազով կը ստորին, մեծերն ալ կը խլորտինք հոգեւոր սրտով, առասպելական սուտին ու իրաւին միջև որոտու: Մեծերն ալ չարփով մը կը մանկանան, ու կ'երգանք բարիք, հարցստութիւն, երիտասարդանալ, մնալ առողջ:

ԿԻԼԻԿԻԱ

ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԵՆ

6 ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՍԱՆԳ ՊԱՊԱՅԻՆ ՕՊՏԱԿԱՐ ԵՒ ՀԱՃԵԼԻ ՆՈՒԲԵՐ

մինչեւ իսկ «Աղբատ հպարտ»ը, «անաշխատ անմիկ»ը, «անհաս սուրհանդակ»ը, «չարամիտ դուկից»ը, «անխուճկ վարդապետ»ը, «գողամիտ հակիչ»ը, «նանրախորհուրդ միտք»ը, «չարախօս բերան»ը, «դուրալուր ականջ»ը եւ տակաւին տեսակաւոր թեթութիւնները մարդուն:

2003 թուականը լուրջ թուական մը պիտի ըլլայ: Անոնք որ պիտի լսեն խօսքը նարեկացիի եւ ի խորոց սրտի հրաժարին մեծամտութեան, ծուրութեան, ազգին խորթ աչքով նայելու մեղաւոր կեցուածքէն, օտարամտութեան թեթեւութիւնը, անոնք պիտի ըլլան արժանաւոր գաւակները հայ ժողովուրդին, պիտի օրհնուին նարեկացիին անմիջական օրհնութեամբ: Երանի թէ Աւետարանին մէջ Յիսուսին ակնակաւ հատիկին չափ» հաւատք ունենալիքը, բան մը կը փրկուէր մեր այս անյոյս տրամադրութեան:

Անցնող տարին չա՞ր էր արդեօք: Գուցէ... Իսկ մենք. մենք բարի՞ էինք արդեօք: Թող այս հարցումին պատասխանէ նարեկացիի մեղքերը: Հայու Հոգին:

ՇԱՀԱՆԳՈՒՄՆՍ

ԴՈՒՆ

Երկվանկ անուն, Անպարագիծ, ապրշումէ թովչութիւն: Հովերգուն եմ ես անոր մէն մի շքեղ հնչիւնին, Ա՛խ ան կանչ մըն է, երկնասայլս իմ խորքես, Անվերջ կանչ մը, պիտասանքի, Որ առկայծ է, հեշտագին է, քաղաքահնչիւն ու մեկին,

Անշատումի կամար կապող ձիգ օրերու լոտութեան մէջ:

Ու այդ անուան զոյգ վանկերը, ես կը կրկնեմ յեղակարծ,

Ամէ՛ն անգամ, Խենթ պահերու վեհութեան մէջ, տեւողով մ'անհուն,

Անօրէական ծէսով մը սուրբ, Ես կը խառնեմ կերած հացին, խմած ջուրին, Համը անոր երակներու մէջէն կ'անցնի, Կենսանորոգ աւիշի պէս, Ձայն կը պարպեմ ուրախութեան բաժակիս մէջ, Ու կը յորդիմ արիւրէս դուրս, արիւրաբաժ թումբ ու պատնէշ, «Տեսէ՛ք»- կ'ըսեմ, անախ ծով եմ ես փրփրադէպ:

Ուրախութեան բաժակ վեհ, կը բարձրացնեմ մինչեւ երկինք, Աստղեր կ'իջնեն անոր անհուն ջինջ յատակին, Ես պայն կ'ըմպեմ խորախորհուրդ եւ միշտ ցմրուր, Տենչանքիս մէջ գինով, զեղուն, մաքրամաքուր, Նոյնիս կ'ըմպեմ, եւ միշտ անահ, մրո՛ւրն անոր,

Մրմուր-մրմուր կը կայծկլտամ՝ Կոյր կարօտի խենթ ապրումով:

Ափսոսանքի անվերջ կանչ չեւ, դուն, չէ՛, բնաւ, Խոր դարերէն ինծի հասնող յանդգնութիւն մը պայծառ,

Որ գո՛ց գիտեմ՝ խութերն անոր, Անկումներուն թափը հսկայ, թելումները սրաթոխ:

Սիրակարօտ կանչ ես անսանձ, Խելացնոր, պերճադրոշմ ու առնագեղ, Հոգեխոնով, թովիչ այնքան, Եւ էական բայի նման, Միշտ ներկայ ես, ո՛ր որ ըլլամ, Կ'ողողեւ պի սիրատնջի անյուր բախտով, Ձիւ կը մղեւ երպ անախ անհուններուն, անդունդներուն:

Ու կը մնաս անվերադարձ, Անդարձ անհաս, վառ, թրթռուն...

Երկու վանկով մէկ սո՛ւրբ անուն, Հո՛գիս ես դուն:

Շ. ԱՇԿԵԱՆ

White-Westinghouse®

Մայքրուէյվ Մայքրո գիներով

\$109 + VAT DIGITAL CONTROL 30 Litres

\$109 + VAT DIGITAL CONTROL 28 Litres (with grill)

\$99 + VAT DIGITAL CONTROL 28 Litres

\$89 + VAT ROTARY CONTROL 28 Litres

\$79 + VAT DIGITAL CONTROL 23 Litres

Վճարումը՝ կանխիկ

ԱՐԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ. Պուրճ Կանուտ - Քաղաքապետ. հրապարակ ԴԵՆԱՉԱՅՆՆԻ 01-241000 2րդ մուտք, Սամբըր Պլանքոյն: Կատարողը պաշտօնավոր:

ԱՖՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐԲԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

RENT AND SALE

• Over Bed Table

• All Kinds Of Oxygen

We Also Provide

- Laboratory services
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՅՈՒՑԱՍՐԱՐՎ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ

ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ՇԵԼԵ, Բ. ՅԱՐԿ

ԿԵՐ. (01) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Ազգայն»ի մէջ ազգային կամ անտեղական ծագուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգայն»ի ծանուցումներու գրասենեակը:

ԳԻՏԱԿԱՆ

ՄՈՒԿԻՆ, ՄԱԼԱՐԻԱ ՊԱՏՃԱՌՈՂ ՄԱԿԱԲՈՅԾԻՆ ԵՒ ՄԺԵՂԻՆ ԺԵՆՈՄԵՐԸ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ

2002 տարին, որուն հրաժեշտ պիտի տանք այս գիշեր, բեղուն եղաւ գիտութեան եւ արհեստագիտութեան մարզերուն մէջ: Ընտազօտողներ ի միջի այլոց բաճալի էակներու ժենոմը յայտնաբերեցին, միջատներու ամբողջովին նոր տեսակ մը գտան եւ արեգակնային դրոշմներու անդին «ամսպատելի» յայտնաբերումներ կատարեցին:

Փոքրիկ է, «մուշտակ»ով ծածկուած եւ բնաւ մարդու չի նմանիր, սակայն մուկին բոլոր ծիններուն յայտնաբերումը ցոյց տուած է, թէ մուկներուն եւ մարդոց միջեւ այնքան ալ մեծ տարբերութիւններ չկան:



Մուկին ժենոմին յայտնաբերումը ցոյց տուած է, թէ մուկերն ու մարդիկ այնքան ալ տարբեր չեն իրարմէ: Այս յայտնաբերումը օգտակար պիտի ըլլայ հիւանդութեանց գծով նոր հետազոտութիւններու համար: (Նկարին վրայ՝ սոնցրութեմ տառապող մուկ մը):

Մարտ 10-ին, Վարս 0տիսի անընդհատաբերող զրկած նորազոյն տեղեկութիւններուն համաձայն, ստուած ջուրի մեծ քանակութիւններ կրնան գոյութիւն ունենալ կարմիր մուրակին վրայ՝ քանի մը տասնեակ սանթիմետր հողի տակ:

Չորրորդ հոկտեմբեր, «Ջրանցք»ներ եւ այլ փաստեր ցուցանել են, թէ անցեալին Հրատ հեղուկ ջուրով հարուստ եղած է: Ո՞ր է այդ ջուրը այսօր: Գիտնականներու համաձայն, անոր մէջ մասը շոգիացած է, իսկ միւս մասը մակերեսին անմիջապէս տակը կը գտնուի:

15 Յունիս 2002ին Ֆուլթոնի դաշտի մը մեծութեամբ 2002MN աստղակերպը 120 հազար քիլոմետր մոտեցած էր երկրագունդին: Ժայռային այդ մարմինը, որ ժամական 36800 քմ. արագութեամբ կը սուրար, կորիզային ռուբը մը պայթումի չափ վնաս պիտի հասցնէր, եթէ բախէր մեր մոլորակին: Աստղագէտներ գայն նկատած էին անցնելէն 3 օր ետք միայն...

ՄԱՐԿԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՄԵՆԵՆ ՀԻՆ ԱՆԴԱՄԸ

Աւելի քան տասնամեակ մը պեղումներէ ետք, Չատի մէջ աշխատող հետազոտողներ Մարտին գտան բազմաթիւ գրեթէ անթափանչ գանձ մը, որ կարգ մը գիտնականներու համաձայն, կը պատկանի ցարդ ծանօթ մարդկային ընտանիքին ամէնէն հին եւ ամէնէն նախնական անդամին: Անիկա կոչուած է Թուվալ, որ տեղական Կորան լեզուով «Կեանքի յոյս» կը նշանակէ:

Բրածոն կը պատկանի ամբողջովին նոր տեսակի հոմինինտի մը՝ Սահելանթրոպիուս չատեմիս: Ծուրը 7 միլիոն տարեկան այդ բրածոն գիտնականները քանի մը քայլ աւելի մոտեցուց ժամանակին մէջ այն կէտին, երբ մարդիկ եւ շնամկանները տարբեր ուղղութիւններով ընթացած են:

Սակայն, որուն գիտնականնց բոլոր յայտնաբերումներուն պարագային, այս մէջը նաեւ շատ աւելի հարցադրումներու դուռ կը բանայ, քան կը պատասխանէ հարցումներու: Կարգ մը գիտնականներու համաձայն, գանձը անցեալի կապիտի մը կը պատկանի:

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՁԵՐՄԱՅՈՒՄԸ ԱՆԹՐՈՓՈՒԹԻ ՄԵՋ ՄԱՌՈՅՑԻ ՀՍՎԱՅ ԿՏՈՐ ՄԸ ԿԸ ԲԱԺՆԵ ՅԱՄԱՔԱՄԱՆԵՆ

Անթրոպոլոգի թերապիստները արեւելեան կողմը գտնուող ծիփացող հսկայ Լարսըն Պի սառույցի կտորին հիւսիսային բաժինը այս տարի բաժնեցեալ ցամաքամասէն:

Դէպքը, որուն գիտնականները հետեւած են արբանեակներու զրկած պատկերներու, օդանաւերու եւ հետազոտութեան յատկացուած նաւերու կողմէ՝ անոր իրբեւ արդիւնք ստեղծուած սառցալուծներու ճամբով, շրջանին մէջ 30 տարուան նման դէպքերու մեծագոյնն է:

ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿԻ «ՆՈՊԷԼԵԱՆ» ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

Նոպէլեան սովորական մրցանակներէ անկախ, քանի մը տարիէ ի կրնալ զէմքին վնասելը: Քանի մը օրինակներու համար, գործ «Կարեւոր ինչ պէտք է վերարտադրել», ըստ հանդիսութիւնը կազմակերպող գուարթախոհ «Անրոյ ֆալսիմփոպարալ Ռիսթը» թերթին:

Ի՞՞՞ Նոպէլեան մրցանակները Հոկտեմբերին տրուեցան Մ. Նաւանգներու Հարվըտ համալսարանին Սէնտրալ սրահին մէջ:

Հանդիսութիւնը կազմակերպած Մարք Էյպֆը ըսած է. «Ասոնք յորովը հետազոտութեան ծրարներ են, որոնք յօնքերը վեր կը բարձրացնեն (ընկանարար

ՔՐՏՆՈՂ «ՄԱՆԸՔԷՆ» ՄԸ

Հոնկոնկցի հետազոտողներ ստեղծած են «մանըքէն» մը, որ այնքան իսկական մարդու կը նմանի, որ նոյնիսկ կը քրտնի: «Ուոլթըր» օգտակար պիտի ըլլայ նորաձեւութեան մարզի մասնագէտներուն, որպէսզի ստեղծեն զինուորական եւ մարզական աւելի հանգստաւէտ տարազներ:

Տաքցուած ջուր պարունակող խողովակներով լեցուն Ուոլթըրին մարմնին ջերմաստիճանը կարող է արագափոխել: Անիկա 3 խաւերէ բաղկացած «մորթ» մը ունի

գէտ մը, իր տղեկին անդադար լացին իմաստը չհասկնալով, ստեղծած է փոքրիկ սարք մը, որ 20 երկվայրկեանի մէջ ծնողներուն պիտի կարենայ լսել, թէ իրենց երեխան անօթի է, ծանձրացած, յոգնած, «ընկճըւած» կամ անհանգիստ:

